

## Հաճախակի տրվող հարցեր

**1. Ովքե՞ր կարող են դիմել «Պատիվ ունեմ» ծրագրին ընդգրկվելու համար:**

Ծրագրին կարող են մասնակցել ավագ դպրոցն(կամ քոլեջը) ավարտող և Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատության դիմորդ հանդիսացող կամ ԲՈՒՀ-ի առաջին կուրսում սովորող քաղաքացիները, որոնք ենթակա են տվյալ տարվա **ամառային և ձմեռային գորակոչին:**

**2. Որտե՞ղ, ի՞նչ ժամկետներում և ի՞նչ փաստաթղթեր պետք է ներկայացնի քաղաքացին «Պատիվ ունեմ» ծրագրին մասնակցելու համար:**

Ծրագրին մասնակցելու վերաբերյալ դիմումի և կից փաստաթղթերը (Գնահատման և թեստավորման կենտրոնի համապատասխան հաշվի համարին փոխանցված 1500 **դրամ** վճարի անդորագիր, քաղաքացու անձը և Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատություններում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կամ ինտեգրացված կրթական ծրագրով առկա ուսուցմամբ սովորելու (կամ տվյալ ուսումնական տարվա շրջանակներում դիմորդ հանդիսանալու) հանգամանքը հաստատող փաստաթղթերի պատճենները.) քաղաքացիները պետք է ներկայացնեն տարածքային գինվորական կոմիսարիատ (ՏՁԿ)՝ **մինչև հունիսի 1-ը:**

**3. Ո՞ր դեպքում Ծրագրին մասնակցության դիմումը կարող է մերժվել:**

Առողջական վիճակի պատճառով ՀՀ կառավարության 2018թ. ապրիլի 12-ի N404-Ն որոշմամբ ՌՌԻՀ-ում ուսանելու համար ոչ պիտանի ճանաչվելու, ինչպես նաև ուսումնառությունը 26 տարին լրանալուց հետո ավարտելու, ինչպես նաև սույն ծրագրով տրամադրված տարկետման իրավունքը դադարելու դեպքերում քաղաքացու դիմումը ՏՀԿ-ի կողմից մերժվում է՝ նշելով մերժման հիմքը:

**4. Ի՞նչ պայմանների պետք է բավարարի քաղաքացին Ծրագրում ընդգրկվելու համար:**

Գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից թեստավորումը անցկացվում է (անցկացման վայրը՝ ք. Երևան)՝ **հունիսի 25-ից 30-ը**.

- դասակի հրամանատարների պաշտոնների համալրման պատրաստության դեպքում թեկնածուները հանձնում են **80 առաջադրանքից բաղկացած թեստ (ընդհանուր զարգացվածության հարցաշար)**, որի լրացման համար հատկացվում է **150 րոպե ժամանակ**,

- բժշկական մասնագիտացում պահանջող պաշտոնների համալրման պատրաստության դեպքում թեկնածուները հանձնում են **80 առաջադրանքից բաղկացած թեստ (Ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն մասնագիտական առարկաներից կազմված հարցաշար)**, որի լրացման համար հատկացվում է **150 րոպե ժամանակ**:

Թեստավորման արդյունքները հրապարակվում են **թեստավորումից հետո՝ 3-րդ օրը**:

Թեստավորման արդյունքի հետ անհամաձայնության դեպքում բողոքարկումը կատարվում է արդյունքների հրապարակման **հաջորդ օրը, ժամը 9:00-18:00՝** թեստավորումը կազմակերպած կենտրոնում:

Թեստավորման արդյունքներով հաղթող են ճանաչվում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից ներկայացված անհրաժեշտ տեղերի թվի շրջանակներում առավելագույն միավորից նվազման կարգով մինչև անհրաժեշտ թիվը լրանալը, համապատասխան միավորներ հավաքած այն քաղաքացիները, որոնց միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կազմում է տվյալ բարձրագույն ուսումնական հաստատությունում սահմանված ՄՈԳ-ի առավելագույն արժեքի առնվազն 70 տոկոսը, կամ՝ ովքեր հավաքել են տվյալ բարձրագույն ուսումնական հաստատության համար սահմանված ընդունելության քննությունների առավելագույն դրական միավորների հանրագումարի առնվազն 75 տոկոսը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի N 597-Ն որոշմամբ հաստատված կարգի 108-րդ կետի համաձայն կամ միջնակարգ կրթության ատեստատի կամ միջին մասնագիտական կամ նախնական մասնագիտական ուսումնական հաստատության ավարտական փաստաթղթի գնահատականներով բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունված այն քաղաքացիները, ովքեր հավաքել են **ընդհանուր զարգացվածության աստիճանը որոշող թեստի առավելագույն արժեքի առնվազն 75 տոկոսը**: Ընդ որում, անկախ թեստավորման արդյունքներից, հաղթող ճանաչվելու առաջնահերթությունը տրվում է համապատասխան միջին որակական գնահատական ունեցող քաղաքացիներին:

**6. Ծրագրի ավարտից հետո որտե՞ղ, ի՞նչ պաշտոնում և ի՞նչ սկզբունքներով է քաղաքացին նշանակվում ծառայության:**

Քաղաքացիները պարտավորվում են բարձրագույն ուսումնական հաստատությունը և ռազմական պատրաստության դասընթացներն

ավարտելուց ու պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելուց հետո Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններով անցնել կրտսեր սպայական կազմի պայմանագրային զինվորական ծառայություն՝ դասակի հրամանատարի (հրաձգային և հրետանային) պաշտոնի համալրման զինվորական պատրաստություն անցած լինելու դեպքում՝ 2 տարի 3 ամիս ժամկետով, որում առաջին 3 ամիսը՝ շարքային կազմի պարտադիր զինծառայողի կարգավիճակով, իսկ բժշկական մասնագիտացում պահանջող պաշտոնների համալրման պատրաստություն անցած լինելու դեպքում՝ 1 տարի ժամկետով, կլինիկական ռեզիդենտուրայում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության պատվերով ուսումնառության և հետուսումնական 4 տարի ժամկետով: Զինվորական պատրաստություն անցնելու են Ծրագրի բոլոր մասնակիցները, իսկ դրանից ազատվելու կամ հեռացվելու դեպքում քաղաքացին զրկվում է տարկետման իրավունքից, բարձրագույն ուսումնական հաստատությանը միանվագ վճարում է այդ հաստատության վճարովի համակարգում տվյալ մասնագիտության գծով ուսումնառության տարիների համար սահմանված ուսման վարձի հանրագումարի **կրկնապատիկը** և զորակոչվում է պարտադիր զինվորական ծառայության: Տվյալ պարագայում հրաժարագին չի վճարվում միայն առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու և (կամ) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատագրկման դատապարտվելու հիման վրա պատիժ կրելու պատճառով պայմանագրի գործողությունը վաղաժամկետ դադարեցվելու դեպքերում:

***7. Որ դեպքերում դադարում քաղաքացուն տրված տարկետումը:***

Ջինվորական պատրաստություն անցնելու են Ծրագրի բոլոր մասնակիցները, իսկ դրանից ազատվելու կամ հեռացվելու դեպքում քաղաքացին զրկվում է տարկետման իրավունքից, բարձրագույն ուսումնական հաստատությանը միանվագ վճարում է այդ հաստատության վճարովի համակարգում տվյալ մասնագիտության գծով ուսումնառության տարիների համար սահմանված ուսման վարձի հանրագումարի **կրկնապատիկը** և զորակոչվում է պարտադիր զինվորական ծառայության: Տվյալ պարագայում հրաժարագին չի վճարվում միայն առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու և (կամ) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատագրկման դատապարտվելու հիման վրա պատիժ կրելու պատճառով պայմանագրի գործողությունը վաղաժամկետ դադարեցվելու դեպքերում:

«Պատիվ ունեմ» ծրագիրը կարգավորվում է ՀՀ կառավարության 2018թ. ապրիլի 12-ի N430-Ն և N455-Ն որոշումներով, որտեղ հստակ նշված են այն բոլոր ընթացակարգերը, որը անհրաժեշտ է ծրագրի մասնակից դառնալու համար: